ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 23 - Ա

21 հունվարի 2021 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԿՈՄԻՏԵ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N 35-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ ու 5-րդ մասերի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 37-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունվարի 30-ի N 93-Ն որոշումն ու Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 23-ի N 165-Ն հրամանի 9-րդ, 10-րդ կետերը

որոշում եմ՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ներքին աուդիտի կոմիտե:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ներքին աուդիտի կոմիտեի կազմը՝

Սանոսյան Գնել	- ՀՀ Գեղարքունիքի մարզպետ, կոմիտեի նախագահ
Խլղաթյան Սևակ	- մարզպետարանի գլխավոր քարտուղար
Աղեկյան Ալբերտ	- մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալ
Մուշեղյան Յուրա	- մարզպետարանի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ
Զոհրաբյան Արմեն	- մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ
Զազյան Կարեն	- մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ

Դվոյան Սևակ - մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի տեղակալ

Ղուլոյան Հակոբ - «ՔՐՈՈՒ ԸՆԴ ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ, կոմիտեի քարտուղար, /համաձայնությամբ/

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2013 թվականի մարտի 15-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ներքին աուդիտի կոմիտե ստեղծելու մասին» N 35-Ա որոշումը:

21.01.2021

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

Подписано SANOSYAN GNEL 1710830069

ՄԱՐԶՊԵՏ
ՍԱՆՈՍՅԱՆ Գ.

Ք. Գավառ